



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՄԱՏԵԱՆ ԹԵՍԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԼԻՆՍԻ ՀԻՄՆԱՐԿԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՅԾԸ ԱՅՑԵԼԵՑ ԱՉԳ. ՎԱՐԺԱՐԱՎԱՆԵՐ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու ժողովականութեան Ներկայացուցիչներուն հետ նախօրօք ճշդուած ժամադրութեամբ, Լիսի Հիմնարկի նոր նախագահ Տիար ճեյ Շաքօ եւ փոխ նախագահ Տիար Յարութ Սասունեան Հինգշաբթի, 21 Փետրուարին այցելութիւններ տուին Ազգային չորս վարժարաններ, ծանօթանալու համար անոնց կրթական վիճակին ու զանազան ծրագիրներուն:

Առաջնորդ Սրբազան ու Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի Ներկայացուցիչներ՝ Տեարք Մարք Կետիկեան, Վարդգես Թովմասեան եւ Տիկին Սոսի Յովսեփեան առաւտեան ժամը 10ին հիւր Ներկայացուցիչները դիմաւորեցին Ազգ. Ֆերահեան Երկոր. Վարժարանին մէջ: Այսուհետեւ, շրջապտոյտը ընդգրկեց Ազգ. Ռոզ եւ Ալեք Փիլիպոս Երկոր. Վարժարանը, Ազգ. Թիւֆէնքեան Մանկամատուրն ու Ազգ. Վահան եւ Անոյշ Շամիեան վարժարանները: Ա. Փիլիպոս վարժարանին մէջ կայացած հանդիպումին Ներկայ էին նաեւ Խնամակալ Մարմինի անդամներէն Տիկին Մակի Մարգունի ու Վարժարանին Ուսումնական Մարմինի Ներկայացուցիչներ:

Մեր Վարժարաններու Տևորէններն ու անձնակազմերու Ներկայացուցիչները մասնակցեցան հիւրերու դիմաւորումին ու զանոնք հաղորդ դարձուցին ուսումնական աշխատանքներու ընթացքին ու բարգաւաճման ծրագիրներու: Ազգ. Ռ. եւ Ա. Փիլիպոս Վարժարանի տևորէննութիւնը նաեւ ճաշով հիւրասիրեց յարգելի հիւրերը:

Զննական շրջապտոյտը պիտի շարունակուի յառաջիկայ Չորեքշաբթի, ընդգրկելով Լոս Անդելզի ու շրջակայից միւս Վարժարանները:

Առաջին օրուան շրջապտոյտի աւարտին, Առաջնորդ Սրբազանը, ժողովականութեան Ներկայացուցիչներն ու հիւր պաշտօնատարները հասան Ազգ. Առաջնորդարան: Առաջնորդ Սրբազանը անոնց ծանօթացուց նոր շենքին բաժանմունքներն ու ընդհանրապէս Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ տարուող աշխատանքներուն շրջագիծը: Յրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը յուշանուերներ յանձնեց Լիսի Հիմնարկութեան Ներկայացուցիչներուն:

PRESIDENT OF THE LINCY FOUNDATION VISITS PRELACY SCHOOLS AND HEADQUARTERS

On Thursday, February 21st, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, President of The Lincy Foundation Mr. Jay Rakow, and Senior Vice-President Mr. Harut Sassounian visited four local Prelacy schools, accompanied by Board of Regents Chair Mr. Mark Guedikian and Vice-Chair Dr. Albert Tomassian.

The visit began at 10:00 a.m at Ferrahian High School, and continued at Rose and Alex Pilibos High School, where lunch was hosted by the administration. The visits continued in the afternoon with stops at Richard Tufenkian Pre-School and Vahan and Anoush Chamlian School. The purpose of the visits was to become more closely familiarized with the administration, students, activities, and projects of Prelacy day schools and to get a better understanding of the challenges they face.

Following the school visits the delegation arrived at the Prelacy headquarters where they were given a tour of the new premises and were acquainted with the various departments and undertakings of the Prelacy. Prior to their departure the Prelate presented the guests with mementos.

Visits to A.G. Minassian School, Armenian Mesrobian High School, and Levon and Hasmig Tavlian Pre-School will take place in the coming week.